ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունիսի 2020թ. № 152

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2020 թվականի հունիսի 3-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճուղի» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման թվով երկու կայաններում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունիսի 2020թ. № 153

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՈՒՍՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արուսյակ Նալբանդյանի 2020 թվականի հունիսի 3-ի հայտը՝ *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Արուսյակ Նալբանդյանին (ՀՎՀՀ 66006791) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 35» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 49 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումն ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունիսի 2020թ. № 154

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2020 թվականի հունիսի 3-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան 1» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 9
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունիսի 2020թ. № 155

ԳԱՐԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ԱՐՓԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԵՍՏ ԱՐՄԵՆԱԿԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով, 244[9]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 2020 թվականի մայիսի 27-ի արձանագրությունը, 2014 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված վարձակալության պայմանագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30122014-06-0029 վկայականը, հողամասի հատակագիծը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1958017 վկայականը, հաշվի առնելով, որ Գարիկ Յուրիկի Ղազարյանը, Արփինե Յուրիկի Ղազարյանը և Համեստ Արմենակի Նիկողոսյանը, առանց հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելու, ինքնակամ փոփոխել են իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 06-006-0444-0027 կադաստրային ծածկագրով 0,886 հա մակերեսով հողամասից 100 քառակուսի մետր մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը՝ հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելով «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը շարժական կապի բջջային կայան տեղակայելու և շահագործելու նպատակով՝ *որոշում եմ.*

1. Գարիկ Յուրիկի Ղազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ հիսուն հազար ՀՀ դրամ:

2. Արփինե Յուրիկի Ղազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ հիսուն հազար ՀՀ դրամ:

3. Համեստ Արմենակի Նիկողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ հիսուն հազար ՀՀ դրամ:

4. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Գարիկ Յուրիկի Ղազարյանին, Արփինե Յուրիկի Ղազարյանին և Համեստ Արմենակի Նիկողոսյանին:

5. Գարիկ Յուրիկի Ղազարյանին, Արփինե Յուրիկի Ղազարյանին և Համեստ Արմենակի Նիկողոսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գարիկ Յուրիկի Ղազարյանին, Արփինե Յուրիկի Ղազարյանին և Համեստ Արմենակի Նիկողոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

7. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունիսի 2020թ. № 156

ՌԱԶՄԻԿ ԱՍԱՏՈՒՐԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով, 244[9]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 2020 թվականի մայիսի 27-ի արձանագրությունը, 2009 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված վարձակալության պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0076304 վկայականը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի բնակիչ Ռազմիկ Ասատուրի Նազարյանը, առանց հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելու, ինքնակամ փոփոխել է իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 276-004-1 կադաստրային ծածկագրով 100 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելով «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությանը շարժական կապի բջջային կայան տեղակայելու և շահագործելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Ռազմիկ Ասատուրի Նազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ հիսուն հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Ռազմիկ Ասատուրի Նազարյանին:

3. Ռազմիկ Ասատուրի Նազարյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռազմիկ Ասատուրի Նազարյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 9
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունիսի 2020թ. № 154

ԱՇՈՏ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 2020 թվականի մայիսի 27-ի արձանագրությունը, անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի բնակիչ Աշոտ Հրաչիկի Սիմոնյանը ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0505-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00601 հեկտար մակերեսով հողամասը և չի վերացրել դրա հետևանքները՝ նշված հողամասում 2019 թվականին կառուցելով 6,45 քառակուսի մետր մակերեսով շինություն՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին:

3. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 9
ք. Սպիտակ